տարբեր բաներ մէկմէկու հետ չփոթելէն, որ է նպատակն ու միջնորդը. նպատակն է մեր պէտքն հաճեցնել. աշխատութիւն կամ նեղութիւնն է միջնորդը. մարդու մը՝ ինչպէս նաև ընկերութեան մը բարեկեցութիւնն իր աշխատութենէն չիչափուիր՝ այլ իր պէտքն հաճեցնելու միջոցներէն. ինչ որ աշխատութիւն և նեղութիւն նուաղեցնելով արդիւնք կը շատցընէ՝ բարիք է իրեն և ընկերութեան համար։

Պակսեցնել գործաւորաց որոշեալ ժամանակի մէջ կատարելիք գործոյն քանակը, և պակսեցնել աշխատութիւնն և պէտք եղած նեղութեան չափը որ և իցէ վաճառք մը արդիւնաւորելու համար՝ երկու իսկապէս մէկմէկէ տարբեր բաներ են։ Եթէ գէշ ըլլար որ և իցէ նիւթ մը արդիւնաւորելու համար պէտք եղած նեղութիւնը պակսեցնելը, հետևանքն այն կ'ըլլար որ մարդիկ ամեն բան կարելի եղածին չափ շատ նեղութեամբ պէտք էին առաջ բերել։ Այսպիսի առաջարկութեան մը վրայ խօսիլը միթէ անոր այլանդակութիւնն ապացուցանել չէ։

— Հրամանքիդ կարծիքէն եմ, Պ. Ցիւբրէ, և հիմա կ'իմանամ թէ երկու զանազան բաներ շփոթեր էի. բայց վաճառք շինելու համար պէտք եղած նեղութիւնը վերածելով՝ մի և նոյն ժամանակ գործաւորաց համար գործելի իրաց քանակը չենք քիչցներ։ Եթէ օրինակ իմն ճարտարական արուեստի մը բաւական բազմութիւն գործաւորաց կը զբաղին, շինութեան կերպերուն կատարելագործութիւնը որով կիսովին նուազ աշխատութեամբ վաճառքն առաջ կը բերուի՝ գործաւորաց կէսը գործէ կը զրկէ։

— Խնդրոյն կերպարանքը կը փոխես, և ինչպէս որ պէտք է զանազանելով գործն ու աշխատութիւնը՝ ճշմարիտ հիման վրայ կը կայացնես. շատ աղէկ. ես քեզի մէկէն և աղատաբար կը պատասխանեմ։ Այո, այս բանս կրնայ հանդիպիլ և կը հանդիպի երբեմն, բայց չարիքն ոչ երբեք այնչափ մեծ է և այնչափ ընդհանուր, և ոչ երբեք կարծուածին չափ երկայն կը տևէ. այլ փոխարէն աւելի մեծագոյն բարիք կը շնորհէ։ Բայց այս խնդիրը կը կապակցի հանրագոյն և կարևորագոյն նիւթոյ մը հետ զոր խնամքով պիտի քննենք։

Հիմակուհիմա մի մոռնաք որ եթէ շատ և միշտ գործ ունենալը գործաւորաց և տերանց համար շահաւոր է, ամենայն ինչ ըստ կարելւոյն քիչ նեղութեամբ առաջ բերել և ամեն բան ուժան ստանալ իրենց ալ սպառողաց ալ շահաւոր է, որ է ըսել բովանդակ մարդկութեան։

ՌԱԲԻ

Կը շարունակուի։

---

## ՀԱՑԻ ՊԱՏԱՌԻ ՄԸ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

### ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

### ՄԱՐԴ

ՆԱՄԱԿ ԵՐԵՍՆԵՐՈՐԴ ԵՐԿՐՈՐԴ

( Տես երես 157։ )

Որոճող կենդանին շտապելու բան մը չունի, որովհետև աշխարհիս վրայ ուրիշ ընելու բան մը չունի. ուստի ժամերն այս կերպով կ'անցնին, ու խոյրին կծիկները ետևէ ետև վեր կ'ելլեն. անկէ դարձեալ վար կ'իջնեն, այլ յետ երկայն ատեն լսուելէն ու գրեթէ ջրոտ խիւս մը դառնալէն, որ անարգել կիսաբաց խողովակին մէջէն սահելով կ'անցնի, և շիտակ երրորդ քսակի մը մէջ կ'իյնայ, զոր թերթք կը կոչեն. որովհետև ներքուստ բազմաթիւ ծալքեր կը ներկայացնէ, որ գրքի մը կերպարանքը կու տան իրեն։ Թերթքէն խոտոյ խիւսը ուրիշ չորրորդ ու յետին քսակի մը մէջ կ'իյնայ որ բուն ստամոքսն է, որուն մէջ մարսողութեան վերջին գործը կը կատարուի։ Ասոր ալ նմանապէս խաւիացոյ անունը տուած

են, որ կաթը խախտելու կամ մակարդ դարձնելու յատկութենէն առաջ կու գայ։ Այդ չորս ատամնքսերէն միայն խախտողն է որ 'ի սկզբան որոճողին կը ծառայէ։ Քանի որ մորը կաթը ծծելով կ'ապրի, միւսները անգործ և բոլորովին պզտի կը մնան. և միայն երբ կը սկսի խոտ ուտել՝ անոնք ալ կը սկսին պաշտօնին ընել ու մեծնալ։ Ըստ ամենայն հաւանականութեան նաև խոպառ անհետ կ'ըլլային, եթէ մէկը ուղենար ծակքն ընելով կենդանին կենաց չափ կաթով սնուցանել։ Ցարակոյս չկայ որ ալ որոճալու նիւթ չունենալով բնութիւնն ալ անոր որոճման գործանոցը անկէ կը վերցնէր։

Այլ իրաքանչիւրին յատուկ եղածը շնորհել ուզելով, պէտք է ըսեմ քեզի որ այդ որոճման պարզ ու ճարտար մեքենականութեան ծանօթութիւնը Պարոն Ֆլուրանի քննութեանց պարտական ենք, ուսումնական մը որ դեռ ևս կ'ապրի, և որ կենդանեաց կենաց նը-կատմամբ հազարումէկ հետաքրքրական քննութիւններ ըրած է։ Ինքն արդարև իմաստուն մարդ մըն է, և անանկ աղէկ գիտէ իր լեզուն, որ Գաղղիոյ ճեմարանը արդար դատեր է զինքն իր ծոցն ընդունելու, և այս անլուր պատիւ մըն է գիտութեանց ճեմարանին անդամ եղողի մը համար։

Խախտողին միւս կողմը ալ ուրիշ փոփոխութիւն չկայ, բայց եթէ այս՝ որ աղեաց խողովակը բնականաբար աւելի երկայն է քան թէ 'ի մեզ, սննդեան տեսակին պատճառաւ. և սովորաբար մարմնոյն տասը կամ տասներկու երկայնութիւնը կ'ունենայ։ Ոչխարը, որ ամենէն ցամաք արօտներուն մէջէն ալ իր կերակրիկը քաղել գիտէ, յատուկ կազմութեան մը պարտական է այն անգին յատկութիւնը, որով անարդասաւոր երկիրներու նախախնամութիւնը է, ինչպէս է Սոլոնը, ոչխարաց Շամբանեան, և վերին Վիրգէմպէրկի ցամաք տափարակ բլուրքը։ Իր աղեաց խողովակին երկայնութիւնը մարմնոյն քսանքրութ երկայնութիւնն ունի։

Ցեսանք թէ ինչպէս մակերաց վերայ կոկորդին ընելու ճգանցը պատճառաւ, ծամելեաց զօրք ալ քնքաց ոսկրին խորշին մէջ կը մնին։ Որոճողը, որուն խաղաղասէր բերանը միայն խոտոց հետ կռուելու համար եղած է, բոլորովին տարբեր կերպով կազմուած է։ Անոր ծամելեաց զօրը խոտորնակի ուղղեալ է, և հազիւ թէ կը դպչի քնքաց ոսկրին խորշին, որ նմանապէս հազիւ թէ թեթև մը փորուած է ու գրեթէ շիտակ մակերևոյթ մը կ'երևցնէ. և այս բանս դիւրութիւն մըն է ծամելեաց որ կրնայ հեշտաւ պտոյտ առնուլ ու խոտոյ կըծիկները լաւագոյն կերպով մանրել։ Սակայն այդ կերպ տրամադրութիւն մեծ թանձրամորթից վրայ կը տեսնուի որ տունկերով կը սնանին. ձին մասնաւորապէս, որուն սնունդը գրեթէ եղանն է, գրեթէ անոր պէս ալ զօդեալ ծնօտ մ'ունի։

Նոյն բանն է նաև ատամանց նկատմամբ։ Ի բաց առեալ մէկ քանի թեթև տարբերութիւններ, որոճողաց ատամնաւորութեան ոճին վրայ շինուած է։ Միայն շնատամունքն են որ յիշելու արժանի բան մը կը ներկայացնեն։

Հարկ է կանխաւ ըսել քեզի, թէ մասնաւոր առանձնաշնորհութեան մը պատճառաւ, որու պատճառը տալ չեմ կրնար, որոճողաց կարգը մէկ հատիկն է որ ճակատին վրայ եղջիւր ունեցող կենդանիներ կը բովանդակէ։ Եղջերուք, այծեմունք, ըէնք, ալպեան այծք, վիթք, այծք, եզինք, պիզոնք, բոլոր ճակատին վրայ եղջիւր ունեցող կենդանիք՝ որոճողաց կը վերաբերին։ Եւ այս շատ դիւրին կերպ մը ըլլալու էր զատնք ուրիշ կենդանիներէ որոշելու, եթէ մէջերնին բացառութիւններ չըլլար։ Մէկ քանի որոճողք եղջիւր չունին, բայց և այնպէս ինչպէս թէ այս զրկմանս փոխարէն մը ըլլար, ատոնք են որ շնատամունք ունին։

Ամենէն գեղեցիկ շնատամունք ունեցող որոճողը յամոյրն է, որ միջին Ասիոյ բարձր լերանց վրայ գտնուող գեղեցիկ պզտի կենդանի մըն է, մեր Ա-

պեան այծուն նման։ Հիմա որ դու զայս կը ճանչնաս, հաւանական է թէ շատ անգամ առիթը ներկայանայ մեզի ա-նոր գոյութիւնը անիծելու, որովհետև փորուն տակը ունեցած պզտի քսակի մը մէջէն է որ կը քաղեն այդ ատելի միսկը, որ Արևելեան կանայց այնչափ ախորժելի է, և զոր մեր տիկնայցմէն ոմանք, շատ զօրաւոր ջղաց տէր ըլլալով, մեծապէս կը վրիպին ընկերութեց մէջ վրանին կրելու, առանց ուշ դնելու հասարակաց առողջութեանը։ Սակայն խօսքերնիս յամոյրին չնատամանց վրայ է։ Վերի ծամելիքէն ելելով կորաձև կ'երկրենան, որով պզտի սուտ վարազի կերպարանք մը կու տային իրեն, եթէ սրունքները մեր այծեման սրունքներէն աւելի նուրբ չըլլային, որու, 'ի բաց առեալ եղջիւրները, շատ կը նմանի։

Յամոյրէն ետքը ուղտերու և լամայից մեծ ցեղը կու դայ. ասոնցմէ առջինները յԱսիա և յԱֆրիկէ, և երկրորդները յԱմերիկայ, այն որոճողաց անկանոն խումբը կը ներկայացնեն՝ որ եղջիւրէ զուրկ են ու շնատամն ունին, և որոնք կրնայ ըսուիլ ինչպէս թէ կապակցութեան անցք մը ըլլան բուն որոճողաց ու թանձրամորթից մէջ։ Այս կենդանիք ձիուն ու եղան մէջ տեղի անցքն ըլլալով, մարդ զանոնք աւելի իբր գըրաստ կը գործածէ քան թէ իբր սպանդանոցի անասուն, թէպէտ և երկրցիք ոչ այնչափ դժկամակութիւն կը ցուցընեն անոնց միսն ուտելու, որչափ մենք յեւրոպա ձիուն մսին համար, որ շատ պարագայից մէջ մեծապէս ընդունելի նպաստ մը կրնար ըլլալ։ Եւ արդարև եղջերաւոր անշնատամն որոճողք աւելի փափուկ միս մը ունին, և կարծես թէ աւելի ուտուելու որոշեալ են։ Եւ սակայն եթէ միայն ստամքսին ուշ դրուելու հարկ չըլլար, որ կարգիս որոշիչ յատկութիւնն է, ուղտք և լամայք որոճողաց առաջինքն ըլլալու էին։ Միւսները չորս ստամքս ունին, իսկ իրենք հինգ։ Իրենց խախացոցը մեծ խորշեր ունի, որ բուն պահարանք են ուր ջուրը կ'երթայ կը լճանայ կ'ամբարի, երբ կենդանին առատ ջրի առջևը գտնուի։ Յետոյ չբաւորութեան ժամանակ նոյնը նորէն վեր բերանը բերելով կը խմէ, ինչպէս կ'ընեն միւս որոճողք ուտելու համար։ Այս բանիս համար է որ ուղտը այնպէս յարգի է Ափրիկէի և Ասիոյ անապատներու աստանդական ժողովրդոց առջին։ Կենդանեաց մէջէն մի միայն է որ Սահարայի արևակէզ երկնից տակ, շատ օր առանց ջուր խմելու կրնայ անցունել, կամ գոնէ առանց ելևցնելու, որովհետև իր ջրի պաշարը ծածուկ մարմնոյն խորը կը կրէ։ Գուցէ ծարաւէ մեռնող Արաբացիներու վրայ պատմութիւններ լսած ես, որ իրենց ուղտերուն փորը ճեղքեր են յետին բաժակ մը ջուր գտնելու համար։ Շիտակն ըսելով ատանկ բան ընելու համար, հարկ է շատ ծարաւ ունենալ, որովհետև կրնաս դուշակել թէ կարելի չէ անանկ տեղ շատ զով ջուր գտնել և ոչ ալ շատ յստակ ջուր. ուր թողունք նաև որ շատ անգամ ամենևին ջուր ալ չգըտնելու վտանգը կրնայ պատահիլ։ Սակայն այդպիսի զեղխութեան մը դէպքը սովորաբար միայն այն ատեն 'ի փորձ կ'առնուի, երբ երկայն ատենէ 'ի վեր ջուրը պակսի և բոլոր տկերուն պաշարը սպառած ըլլայ. արդ այդպիսի պայմանի մէջ հաւանական է որ ուղտն ալ իր տիրոջը պէս ըրած ըլլայ, և նմանապէս ինքն ալ իր ներքին տկերը պարպած ըլլայ։ Սակայն այս բանս, այդ Արաբացւոց կոչած անապատի նաւուն բեռան կէսն է։ Անապատին մէջ ինչպէս խմելու ատանկ ալ ուտելու կերակուր դժուարաւ կը գտնուի, որով բնութիւնը անոր դարմանն ալ տուեր է ըղտուն։ Այն ողին սապատն որ ըղտուն կռնակն կը տեսնես, որովհետև ապահովապէս կ'ենթադրեմ որ պատկերազարդ գրքերուդ մէջ ուղտ տեսած ես, այդ սապատն անոր անօթութեան նըպաստն է։ Ճարպի խոշոր կոյտ մըն է այդ, և ես ասկէ աւելի բան ըսելու պէտք չունիմ քեզի։ Եը յիշես Պարոն Լիպիկին խոզը, որ 160 օր միայն իր

ճարպովը ապրեր է։ Առանց այնչափ հեռուները երթալու, ուղտն ալ կրնայ երկայն ատեն իր ներքին կրակը վառ բռնել միայն այն կիսիչ նիւթերուն միջոցաւ զորոնք արիւնը այդ երանելի սապատին մէջէն կ'երթայ կը ժողովէ։ Բայց որովհետև սոր վրայ խօսք կ'ընենք, և որովհետև սննդառութեան պատմութեանը մէջ իր տեղը բռնած է, պէտք է ըսեմ քեզի որ ուղտերը, իրենց սապատին համեմատ, երկու տեսակի կը դասուին. մէյմը բուն ուղտ ըսուածը որ երկու սապատ ունի, և երկրորդ տաճիկ ուղտը որ միայն մէկ մը ունի։ Այս յետենս առջինին չափ պաշարի պէտք չունէր, որովհետև շատ աւելի երագ է, որով և անապատին անցքին ճամբան ալ աւելի կարճ կ'ելլայ իրեն համար։

Միւս որոճողներուն սննդեան գործարանաց նկատմամբ ուրիշ մասնաւոր բան մը չունիմ ըսելու։ Սակայն չեմ ուզեր առանց բան մը յիշեցնելու քեզի թողուլ զանոնք մէկդի, անանկ բան մ'որ նաև սննդառութեան կը վերաբերի. բայց ուղղակի մեզի ու մեր սննդեան։ Ընտանի որոճողին, այն տիրոջը ետևէն քալող մշտապատրաստ ճաշին սատմամբն է որ սկսած է մարդկային քաղաքականութիւնը։ Անկէ առաջ մարդս ստիպուած ըլլալով որսորդութեան պատեհներովը ապրիլ, չէր կրնար ուրիշ ճարտարութեանց իղձ կապել, այլ և ոչ իսկ ապրուստը հոգալէն դուրս ժամանակ կ'աւելնար իրեն։ Որչափ որ պատմութեան առաջին ժամանակներէ ելլենք՝ խաշնաղարման ժողովուրդներ կը գտնենք. անոնցմէն առաջ եղողները պատմութիւն մը չունին և ոչ ալ կրնային ունենալ, որովհետև մարդուս առաջին դիւրութիւնները, և հետևաբար ալ արուեստից ու մատենագրութեան մէջ անոր ըրած առաջին փորձերն, այն ժամանակէն կը սկսին երբ մահաձնախառն սննդոց գերագոյն շինողքն մարդուս կուսակից եկան, և սկսան անոր վրանին հովանիին ներքևը, անոր առաջնորդութեամբը և անոր շահուն աշխատիլ։ Այլ այս ամենը հիմա մեզմէ շատ հեռու է ու չաժեր որ մենք մեր մտածութեանց նիւթ ընենք։ Մարդկային ազգը քիչ մը այն ծերոց կը նմանի որ երբեմն տղայ եղած ըլլալնին չեն յիշեր, ուստի և պզտի օրիորդք պարտական չեն մեծ անձանց մոռցածները յիշելու. սակայն լաւագոյն է որ գիտնան։ Երբ լսես թէ կենդանեաց պաշտպան ընկերութիւնը բարբարոսութեան մը ենթակայ եղող եզան մը կամ ոչխարի մը դատը ձեռք առեր է, չըլլայ թէ շտապես ու վրան ծիծաղիս։ Այդ նուաստ էակաց տեսակները մարդկային ազգին պաշտպան եղած են առնոր ծագման սկիզբը, և այսպիսի առթով յիշէ նաև թէ մարդկային ընկերութեանց յառաջադիմութիւնը անասնոց հօտով մը սկսած է։

## ՆԱՄԱԿ ԼԿ.

*Կաթնուռք (շարուռնակութիւն)։*

Ահա հիմա անանկ կենդանեաց կը հասնինք՝ որ քեզի այնչափ ընտանի չեն, և որոնց և ոչ մէկը Եւրոպայ կը բնակի։ Ասոնց վրայ խօսքերնիս շուտ կը լմնցնենք։

### 9. Պարկաւորք։

Պարկաւորք միւս կենդանիներէն քըսակով մը կը զանազանին, զոր էգերը փորերնուն ներքևը կը կրեն, և որուն մէջ ձագերը վտանգի ժամանակ կ'ապաւինին։ Ասոնց պատմութիւնը քեզի շահաւոր կրնար ըլլալ, սակայն մեր խօսած նիւթին հետ կապակցութիւն չունի. որով և եթէ ուզենայինք անկէ խոտորիլ՝ շատ կը հեռանայինք։ Այս կարգին, որ այս քսակին յատկութեան կնքաւոր որոշեալ է, մեզի 'ի դէպ չերևնար, և ամենևին իսկ նոր բան մը չներկայացներ։ Որովհետև կարգիս տակը անանկ տեսակներ կը գտնուին հաւաքուած, որ սննդեան նկատմամբ մէկմէկէ շատ հեռու են, և ընդհակառակն առջի ստորագրածներնուս շատ մօտ։

Ոմանք միանգամայն թէ մակեր են և թէ միջատակեր, և ըստ այնմ ալ ոգ-նիին նման զօրաւոր շնաստաններով և աղօրիք ակռաներով զինեալ են։ Այլք, նման նապաստակաց, խոտակեր են՝ և գրեթէ կրծողաց ծամելիքն ունին։ Առ-ջիններուն իբրև օրինակ սարիկը կու տամ, որ գուցէ քեզի ծանօթ է, որով-հետև Ֆլորիանի իբր նիւթ ծառայած է իր գեղեցկագոյն առակներէն մէկը շի-նելու։ Սարիկը հարաւային Ամերիկայի կենդանի մըն է։ Մոլիւքեան կղզիները, ուսկից մշկահոտ ընկոյզը և մեխակը կու գան, ամենագեղեցիկ պզտի պար-կաւոր կենդանիք կը գտնուին, սկիւռ-ներու շատ նման, որ անոնց պէս ծա-ռոց վրայ կ'ապրին, ուր միանգամայն թէ պտուղ կ'ուտեն և թէ միջատ կ'որ-սան։ Սակայն պարկաւորաց մեծագոյն մասը Աւստրալիա կը գտնուին, անոր համար ալ այս կարգիս բուն հայրենիքը կը համարուի։ Կաթնտուաց նկատմամբ այն երկրին գլխաւոր ճոխութիւնն են. ասոնց ամենէն հռչակաւորը քանկու-բուն է, որ եւրոպայի կենդանեաց փա-կարաններուն մէջ կամաց կամաց կը սկսի սովորական ըլլալ, և որ, 'ի բաց ա-ռեալ քսակը, չափէ դուրս մեծ ճա-դար մըն է, մարդու չափ մեծ, և գրե-թէ իր հասակին չափ ալ երկայն պոչ մը ունի։ Եւ որովհետև ճագար մըն է, գիտես թէ ինչպիսի է անոր ուտելու մեքենայն, սակայն վստահութիւնս՝ կեն-դանիները երկրին կլիմային ընտելացը-նելու ընկերութեանը վրայ դրած եմ, թէ օր մը քեզի անոնց ինչ համ ունե-նալն ալ պիտոր հասկցընէ։ Խորոված մըն է որ ժամանակին թողուած է մեր սեղաններուն վրայ երևնալու, և որով-հետև առջևդ ժամանակ ունիս, հաւա-նական է որ դեռ չկերած չմեռնիս։

## 10. Անատամուներ։

Ասոնք մեզի լաւ ևս 'ի դէպ կու գան։ Ակռաներնուն նայելով դասաւորեր են, և եթէ հարկ ըլլար իրենց անուանը վը-րայ վստահիլ, ակռայէ զուրկ ըլլալու են։ Այլ աւաղ. դժբաղդաբար ամենը ակռայ ունին, որով կ'ամբիշնամայդ պաշ-տօնական անուանակոչութեանը հա-մար. բայց ի՞նչ կրնանք ընել։ Ասոնց թուէն բուն անատամունք միայն մրջը-նակերքն են, որոնք յիրաւի, իրենց կերակրին տեսակը նկատելով, կրնա-յին զուրկ ըլլալ։ Մրջնաբոյներուն մէջ կ'երթան իրենց կերակուրը բնտռելու, ուսկից նաև իրենց անունը կ'առնուն. և որովհետև հասակնին բաւական մեծ է, այսինքն երկուքէ մինչև երեք ոտք երկայն, յիրաւի շատ ծանր կը նստեր իրենց եթէ բռնադատուած ըլլային ի-րենց իւրաքանչիւր ճաշին համար՝ հա-տիկ հատիկ իւրաքանչիւր մրջիւնը ծա-մել։ Աւելի շուտ գործ տեսնելու հա-մար, իրենց լեզուովը կը բռնեն զա-նոնք. այլ ինչպիսի՞ լեզուով։ Երևակայէ դեանի մեծ որդ մը ցռուկի մը մէջ զե-տեղուած, որ թռչնոյ մը կտուցքին նը-ման կ'երկրննայ, և ծայրը մանր ծակով մը կը վերջանայ։ Մրջնակերն այդ եր-կայն ու կպչուն լարը մրջնոց խիտ բա-նակներուն վրայ կը պտըտցնէ, որ հա-բիւրաւոր կը փակչին վրան, և իսկ և իսկ կը կլլէ բոլորը առանց մէկի մը թող-լու որ ազատի։ Այդ լեզուն, որ իր տե-սակին մէջ մէկ հատիկ է, այդպիսի սատակիչ գործոց մէջ այն աստիճանի կ'երկրննայ, որ կենդանւոյն երկայնաձև գլխուն մինչև երեք երկայնութիւնը կը ստանայ։ Բայց ահա շատ հեռացանք քու պզտի դունապանէդ։ Կաթնտուաց երկրին վերջին սահմանները հասած ենք, ուստի և կերպարանքն ալ կը սկսի փոփոխել։

Դադուն, օրինակի աղագաւ, որ մրջ-նակերէն ետքը կու գայ, երևոյթով ա-ւելի կրիայի ու մողէսի կը նմանի քան թէ իր երկձեռնի ազնուական եղբայ-րակցաց։ Մարմինը թեփով ծածկուած է, և մատանց դիտելով գրեթէ կրնայ զուրցուիլ որ ներքուստ կատարեալ-գործեալ սողուն մը ըլլայ։ Ատամանց նկատմամբ յիրաւի այնչափ ունի որ կրնայ անատամն անունը սուտ հանել, սակայն միւս կողմանէ իրեն մեծ օգ-

նութիւն մը չեն ըներ։ Այս ակռաները աղօրիք կը կոչեն, որովհետև բերնին խոր զետեղած են, և նոյն իսկ աղօրեաց որոշեալ տեղը. սակայն շատ անկատար երկան են, և ամենեին անեման անոնց որոնց վրայ մինչև ցարդ խօսեցանք։ Ծայրերնին բոլորովին կլոր, տափակ և շիտակ են, առանց ապականութի դօտիներ ունենալու որ անոնց զօրութիւն կու տան, և սակէ զատ ալ պզտի ու վատթար, և մէկմէկէ պարապ միջոցներով բաժանեալ։ Խելք դադուն այսպիսի ակռաներով ալ ինչպէս կրնայ՝ խղունջներ կը ծամէ, փափուկ արմատներ և ուրիշ ասոնց նման որսեր որոնցմով կը կերակրի, և որոնք շատ ահեղ գործիներ չեն պահանջեր մանրուելու։

Այս կարգիս ամենէն վտանգաւոր անդամն է իւնօն կամ ային, որ միայն հերձատամանց պէտք ունի, որպէս զի ինծի ու քեզի պէս ալ անատամն ըլլայ, և զոր առջին անգամ որ տեսայ, կարծեցի թէ արջ մըն է։ Իրաւ է որ այն ատեն ես ալ գրեթէ քու հասակդ ունէի, որովհետև արջը, որ մեր ամենէն մերձաւոր դրացիներէն մէկն է, չիկրնար մեր այս ըսած դժբաղդ կենդանուոյն հետ շփոթուիլ, որ կենդանական ազգին վշտակիր կենդանիներէն մէկն է, թէպէտ և Պարոն տը Պլէնվիլ, որ ինծի պէս անմեղադիր ըլլալ չիկրնար, առաջարկած է զնոյնը մեզի աւելի մերձաւոր կարդելու, քառաձեռնեաց մէջ։ Դիտէ որ իրր ձեռք՝ իր չորս անդամոց իւրաքանչիւրին ծայրը երեք ահագին ու կոր ճիրան ունի, որ մեծ ու ծռած պատառաքաղի մը նմանութիւնը կը բերեն։ Անոր համար ալ իր հռչակաւոր նկարագրիչն զայն իրր անկանոն քառաձեռնի մը կը ներկայացնէր։ Կը հաւատամ։ Այդ անձեռն քառաձեռնին, այդ անատամը որուն աղօրեաց առջևը փառաւոր շնատամունք շարուած կան, այդ բնութեան առեղծուածն որ կարծես թէ դասաւորողքն յուսահատցնելու համար եղած է, նաև, խոնարհաբար կ'ըսեմ, յառաջ կը մատչի կործանիչ հարուած մը տալու այն օրինաց, զոր ձիու վրայ խօսելով՝ շնատամանց նշանակութեանը նկատմամբ զուրցեցի։ Ային շնատամունքը շատ աւելի աղէկ ձևացեալ են քան անոր աղօրիքները, և ստոյգն ըսելով, չեմ կրնար ըսել քեզի թէ այն տեղը ըլլալովին ինչ գործ կը վարեն։ Ծառի տերևներով կ'ապրի, և նախնի ճանապարհորդք, (հարաւային Ամերիկայ կը գտնուի) ըսեր էին, թէ մէկ մը որ ծառի մը վրայ ելլէ, անոր մինչև յետին տերևն ալ ուտելէն եռքը, որպէս զի ինչնելու նեղութենէն ազատ ըլլայ ինքզինքը ծառէն վար կը նետէ։ Այս պատճառիս համար է որ երբեմն ոտոյ վատ անունը տուեր էին անոր, և զոր կը ստուգէ, յիրաւի, անոր դեռնին վրայէն քալելու կերպը։ որովհետև անանկ ձախորդ կազմուածք մ'ունի՝ որ իր անդամոցը վրայ չիտակ կենալ չիկրնար հապա արմկանցը վրայ ինքզինքը քաշկռտելով՝ ծանր ծանր կը յառաջէ։ Սակայն կ'երևայ թէ ծառին վրայ մագլցելով բոլորովին այլապէս կը վարի, և երագաբար ալ ծառէ ծառ կը ցատքէ։ Եթէ իր ճիրանքը ըստ ինքեան իրր ձեռք համարիլ չեն կրնար, սակայն և այնպէս ամենապատշաճ ճանկ են, անանկ որ երբ իր երկայն թևերովը ճիւղերէն կախուած՝ անտառներուն մէջ ժուռ կու գայ, վարէն նայողը գրեթէ իրաւունք կու տայ Պարոն տը Պլէնվիլին։ Ես նոյնը վանդակի մը մէջ տեսած էի։

Իսկ ասոր դադուին հետ ունեցած աղգակցութեանը նկատմամբ, անանկ բանէ մը կախուն ունի՝ որ մեզի ուղղակի կը պատկանի։ Իր աղօրիք ակռաները դադուին աղօրեաց նման կլոր ու կպած են։ Պզտի նմանութիւն մըն է, այլ ինչ կ'ուզես. հարկ էր զայն դասաւորել, որովհետև ուսումնականաց մըտքէն չէ անցած կարգէ դուրս ընկերութիւն մը ձևացնել, ինչպէս է գնդից նկատմամբ։

Կը շարունակուի։

---